



ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ  
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՐԱԿԵՆՏՐ



**ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ.  
21-րդ դարի մարտահրավերներ  
և հնարավորություններ**

**DEVELOPMENT OF ECONOMY AND SOCIETY:  
Challenges and Opportunities of 21st Century**

**РАЗВИТИЕ ЭКОНОМИКИ И ОБЩЕСТВА:  
ВЫЗОВЫ И ВОЗМОЖНОСТИ 21-ого века**

**ՀՊՏՀ 27-ՐԴ ԳԻՏԱԺՈՂՈՎ**

2017 թ., նոյեմբերի 22-24

**Երևան 2018**

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65  
Տ 778

Հրատարակվում է  
ՀՊՏՀ գիտական խորհրդի որոշմամբ

**Խմբագրական խորհրդի նախագահ՝**

**ԿՈՐՅՈՒՆ ԱԹՈՅԱՆ**

ՀՊՏՀ ռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

**Խմբագրական խորհուրդ՝**

- ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ** - ՀՊՏՀ միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., դոցենտ  
**ՍՈՒՐԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ** - ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԱՇՈՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ** - ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԽՈՐԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ գիտության և ասպիրանտուրայի բաժնի պետ, Կ.գ.թ., դոցենտ  
**ԱՇՈՏ ՍԱԼԼԱԶԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ ֆինանսների ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ** - ՀՊՏՀ տնտես. ինֆորմ. և տեղեկ. համակ. ամբիոնի վարիչ, Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ՅՈՒՐԻ ՍՈՒՎԱՐՅԱՆ** - ՀՊՏՀ կառավարման ամբիոնի վարիչ, ՀՀ ԳԱԱ ակադ., Կ.գ.դ., պրոֆեսոր  
**ԳԱԳԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ** - ՀՊՏՀ պրոռեկտոր, Կ.գ.դ., պրոֆեսոր

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ. 21-րդ դարի մարտահրավերներ և  
Տ 778 հնարավորություններ: ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովի նյութեր / ՀՊՏՀ: - Եր.: Տնտեսագետ,  
2018, 780 էջ:

ՀՏԴ 330:06  
ԳՄԴ 65

ISBN 978-9939-61-177-8

© «Տնտեսագետ» հրատարակչություն, 2018 թ.

## ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Գիտաժողովի հարգելի՛ մասնակիցներ,

շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի 27-րդ գիտաժողովի բացման առթիվ և ցանկանում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի բոլոր մասնակիցներին, ովքեր հեղափոխություն են ցուցաբերել տնտեսության և հասարակության զարգացմանն առնչվող հրապարակապ հարցերի նկատմամբ:

Մեր համալսարանի տարեկան գիտաժողովները գեղեցիկ ավանդույթ են դարձել, բայց ես ուրախությամբ եմ նշում, որ դրանց կողքին այսօր առկա են մեր համալսարանի գիտական գործունեությունն արտացոլող այլ ձևաչափեր նույնպես: Հպարտությամբ եմ նշում, որ հեղափոխական համալսարան դառնալու և մեր պետության տնտեսական կյանքին մասնագիտական մասնակցություն ունենալու իմ տեսլականը կամաց-կամաց կյանքի է կոչվում: Համալսարանի «Ամբերդ» հեղափոխական կենտրոնի գործունեությունն այսօր տալիս է նշանակալի արդյունքներ. այսօրեղ ոչ միայն իրականացվում են հանրապետության տնտեսական արդիական հիմնախնդիրների վերաբերյալ հեղափոխություններ, այլև կենտրոնի աշխատակիցները բուհի դասախոսական կազմի ներկայացուցիչների հետ, որպես փորձագետներ, հանդես են գալիս համապետական քննարկումներում:

Մինչ տարեկան գիտաժողովի կազմակերպումը գիտական սեմինարների ձևաչափերով հանդես եկան մեր ամբիոնները՝ շնորհանդեսներով ներկայացնելով իրենց ուսումնասիրության առանցքում առկա թեմաները: Այս ուսումնական տարվանից տրվեց գիտաուսումնական լաբորատորիաների մեկնարկը, ինչը գիտական դրամաշնորհներ, գիտաուսումնական խմբեր և գիտահեղափոխական կյանքի աշխուժացմանը միտված այլ ձևաչափեր ներդնելու մեր մոտեցումների հրաշալի շարունակությունն է:

Համալսարանի տարեկան գիտաժողովը ես հատկապես կարևորում եմ ակնկալիքով, որ այն պետք է վեր հանի մեր հավաքական գիտական ներուժը, ցույց տա համալսարանում գիտական կյանքի որակական փոփոխությունը և դառնա հեղափոխ գործունեության յուրօրինակ ուղենիշ: Այս գիտաժողովի հիմքում տնտեսության և հասարակության զարգացման հարցերն են, որոնք ի ցույց են դնում մեր դարաշրջանի մարտահրավերներն ու հնարավորությունները: Իսկապես, սրանք այնքան փոխկապակցված և կարևոր հարցեր են, որոնք չպետք է անտարբեր թողնեն տնտեսագետներին, չէ՞ որ չի կարող լինել հասարակական զարգացման որևէ մակարդակ՝ առանց կենսունակ տնտեսության:

Հուսով եմ, որ գիտաժողովը՝ իր բաժանմունքներով և կլոր սեղաններով, հնարավորություն կտա մասնագետներին ներկայացնելու իրենց մոտեցումները, բացահայտելու գիտաժողովի խորագրում արտացոլված թեման՝ իր բոլոր շերտերով և նրբություններով: Այնպես որ, արգասաբեր և աշխույժ աշխատանք եմ մտադրում Ձեզ:

Շնորհակալ եմ ուշադրության համար:

ԿՈՐՅՈՒՆ ԱԹՅԱՆ  
ՀՊՏՀ ռեկտոր, պրոֆեսոր

КАРЕН ГРИГОРЯН

## ОСНОВНЫЕ ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ФИНАНСОВОЙ СИСТЕМЫ РА

*Ключевые слова:* финансовая система, финансовое посредничество, банковская система, процентная ставка, валютные интервенции

*В статье обсуждены и выявлены основные тенденции в развитии финансовой системы РА, рост финансового посредничества, проанализированы объем депозитов, кредитов, численность клиентов банков и филиальной сети банковской системы, последствия изменения обязательных резервов банков, оценены изменения размера минимального уставного капитала банков и валютные интервенции ЦБ РА на межбанковском рынке и предложен новый подход классификации банковских кредитов.*

KAREN GRIGORYAN

## THE MAIN TRENDS OF THE DEVELOPMENT OF RA FINANCIAL SYSTEM

*Key words:* financial system, financial intermediation, banking system, interest rate, foreign exchange interventions

*The main trends of the development of RA financial system, particularly the growth of financial intermediation were discussed in the article, the volume of loans provided to the economy and the volume of deposits, the number of customers of commercial banks and the branches network of the Armenian banking system was analyzed, the consequences of the changes in the reserve requirements of banks, the change in the minimum capital of banks and the RA Central Bank's foreign currency interventions in the interbank market have been assessed.*

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Դոցենտ, ՀՊՏՀ

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԸ ԵՎ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

*Հիմնաբառեր.* տնտեսական աճ, աղքատություն, անհավասարություն, ներդրումներ, ՀՆԱ վերաբաշխում, դրամական տրանսֆերտներ, ինվեստիցիաներ

*Աղքատությունը հարաբերական հասկացություն է և բնորոշ է բոլոր երկրներին: Ուստի պատահական չէ, որ աղքատության կրճատումը պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության կարևոր հիմնախնդիրներից է: ՀՀ կառավարության 5-ամյա տնտեսական ծրագրով նախատեսվում է, որ մեր երկրում աղքատությունը պետք է կրճատվի 12%-ով և ներկայիս 30%-ից հասցվի 18%-ի: Դրա համար կարևոր նշանակություն է տրվում ներդրումների խթանմանը և, դրա շնորհիվ, տնտեսական աճի՝ տարեկան 5%-անոց տեմպերի ապահովմանը:*

*Հողվածում փորձ է արվել պարզաբանելու հենց տնտեսական աճի և աղքատության կրճատման հիմնախնդիրները:*

Տնտեսական աճը մակրոտնտեսական ցուցանիշ է, որը բնութագրում է երկրի տնտեսական ներուժը, ինչպես նաև հասարակության բարեկեցության մակարդակը: Տնտեսական աճը հասարակական արդյունքի քանակական ավելացումն է, որը թույլ է տալիս ընդլայնել արտադրական հնարավորությունները՝ հասարակական աճող պահանջ-մունքներն առավելագույն չափով բավարարելու համար: Տնտեսական աճի շնորհիվ է ստեղծվում հասարակական հարստությունը: Ուստի պատահական չէ, որ տնտեսագիտության նախահայրերն իրենց հետազոտության օբյեկտ են համարել այն, թե որտեղ և ինչպես են ստեղծվում հասարակական հարստությունը, նոր արժեքը: Հին աշխարհի մեծագույն մտածողներից մեկը՝ Արիստոտելը, ասել է. «Տնտեսագիտությունը գիտություն է, արվեստ է հարստություն, փող ավելացնելու ուղիներն ուսումնասիրելու մասին»: Այս իմաստով, տնտեսական աճը հասարակական հարստության ավելացման հնարավորություններն է ուսումնասիրում: Պատահական չէ, որ տնտեսագիտության բոլոր ուղղությունների ներկայացուցիչներն անդրադարձել են այս հիմնախնդրին, և յուրաքանչյուրը՝ յուրովի: Տնտեսագիտական մտքի նշանավոր տեսաբան Բ. Սելիգմենը նշել է. «Տնտեսական աճի համընդհանուր տեսության մշակումը գրեթե անիրագործելի խնդիր է»<sup>1</sup>: Այսինքն՝ ակնհայտ է, որ տնտեսական աճը ոչ միայն տնտեսագիտության տեսության, այլև տնտեսվարման պրակտիկայի բարդ ու բազմակողմանի հիմնախնդիրներից է:

Այս իմաստով, հողվածում խնդիր ենք դրել ներկայացնելու տնտեսական աճի կարևորությունը, ինչպես նաև տնտեսական, սոցիալական, քաղաքական բնապահպանական բնութագրումները: Տնտեսական աճը նշանակում է յուրաքանչյուր երկրի տնտեսական ներուժի ավելացում: Եթե դա զուգորդվում է տնտեսական զարգացման հետ, ապա դա հանգեցնում է առաջընթացի: Տնտեսական աճը ինքնանպատակ չէ, այն պետք է ունենա սոցիալական ուղղվածություն: Գերմանացի նշանավոր տնտեսագետ Լյուդվիգ ֆոն Էրիարդն ասել է. «Տնտեսական քաղաքականությունը սոցիալական է համարվում, եթե նպատակաուղղված է հասարակության բարեկեցության բարձրացմանը»<sup>2</sup>: Այլ կերպ ասած, տնտեսական աճը պետք է նպաստի հասարակության բարեկեցության բարձրացմանը՝ աղքատության մակարդակի կրճատմամբ: Այս նկատառումով էլ ներկայացնենք, թե ինչ փոխկապվածություն գոյություն ունի տնտեսական աճի և աղքատության հիմնախնդրի միջև: Տնտեսական աճն ունի նաև քաղաքական երանգներ, որովհետև ցանկացած երկրի կառավարություն իր դիրքերն ամրապնդելու և իշխանավարությունը շարունակելու նպատակով ձգտում է տնտեսական աճի բարձր ցուցանիշներ ապահովել՝ հատկապես նախընտրական ժամանակաշրջանում: Դրա հետ կապված՝ տնտեսագիտության մեջ գոյություն ունի քաղաքական պարբերաշրջանների տեսությունը՝ ըստ որի նախընտրական ժամանակաշրջանում տեղի է ունենում տնտեսական աճի վերելք, իսկ հետընտ-

<sup>1</sup> Курс экономической теории, под. ред. Чепурина М.Н., М., 2004, с. 606.

<sup>2</sup> Экономика под. ред. А.С. Булатова, М., 2001, с. 145.

րական ժամանակաշրջանում՝ տնտեսության հարաբերական անկում: Դա, իր հերթին, որոշակի ազդեցություն է ունենում հասարակության բարեկեցության և աղքատության մակարդակի վրա: Տնտեսական աճը նաև բնապահպանական բնույթի հիմնախնդիր է: Այդ փոխկապվածությունն ունի երկակի բնույթ. մի կողմից՝ տնտեսական աճի բարձր տեմպերի ապահովումը նշանակում է բնական ռեսուրսների պաշարների սպառում, եթե տնտեսությունը էքստենսիվ ուղով է զարգանում, իսկ մյուս կողմից՝ տնտեսական աճի բնապահպանական տեսանկյունը գնահատվում է նրանով, թե ՀՆԱ աճի ապահովման ժամանակ ինչպիսի բացասական էքստերնալ (արտաքին) ազդեցություն է կատարվել շրջակա միջավայրի վրա և որքանով է խրախուսվել դրա էկոլոգիական հավասարակշռությունը: Այլ կերպ ասած, կարևոր է ոչ միայն այն, թե որքան տնտեսական աճ ենք ապահովել, այլև ինչպիսի ռեսուրսային ծախսերով ու ջանքերով է ապահովվել: Եվ, որ ամենակարևորն է, տնտեսական աճը որքանով է նպաստել հասարակության բարեկեցության բարձրացմանը և աղքատության մակարդակի կրճատմանը:

Տնտեսական աճի և աղքատության միջև գոյություն ունի փոխկապվածություն, որն արտահայտվում է հետևյալ կերպ.

- աղքատության հաղթահարումը տնտեսական աճի արդյունք է,
- աղքատության մակարդակի իջեցումը տնտեսական աճի գործոն է:

Տնտեսական աճի և աղքատության կրճատման միջև կապը տնտեսագետները փորձել են ցույց տալ կոռելյացիոն կապի միջոցով և պարզել են, որ 1% տնտեսական աճն այլ հավասար պայմաններում կարող է նպաստել 0,2%-ով աղքատության կրճատմանը: Պետք է նկատի ունենալ, որ այս փոխկապվածությունն ակնհայտորեն չի դրսևորվում, քանի որ աղքատության կրճատումը միայն տնտեսական կամ հասարակական արդյունքների ծավալների աճով պայմանավորված չէ:

Աղքատության ցուցանիշների վրա ազդում են բազմաբնույթ գործոններ: Այդուհանդերձ, աղքատության կրճատման նյութական հիմքը, առաջին հերթին, հասարակական արդյունքի ծավալների ավելացումն է: Ոչ պակաս կարևոր է, թե ինչպես է բաշխվում այդ հասարակական արդյունքը և ինչ կառուցվածք ունի այն: Այս իմաստով, աղքատության կրճատման վրա ազդում է ոչ թե պարզապես տնտեսական աճը, այլև դրա որակը, մասնավորապես՝ սոցիալական կողմնորոշվածությունը: Տնտեսական աճի և աղքատության կրճատման դինամիկան ՀՀ-ում ցույց տալու համար ներկայացնենք հետևյալ աղյուսակը<sup>1</sup>:

Ցուցանիշ	2008	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
ՀՆԱ աճ (%)	6,9	-14,1	2,2	4,7	7,2	5,2	4,7	4,1	0,2
Աղքատության մակարդակը (%)	27,6	34,1	35,8	35	32,4	30,4	34	30	29,8

Տնտեսական աճի և աղքատության փոխկապվածությունը միշտ չէ, որ միանշանակ կերպով է մեկնաբանվում: Այսպես՝ գործազրկության և ինֆլյացիայի բարձր մակարդակ-

<sup>1</sup> Աղյուսակը կազմվել է ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության համապատասխան տարիների հրապարակումների:

ների պայմաններում տնտեսական աճի բարձր տեմպերն էականորեն չեն կարող ազդել աղքատության կրճատման վրա: Օրինակ՝ ՀՀ-ում գործազրկության մակարդակը, ըստ աշխատանքի միջազգային կազմակերպության՝ ԱՄԿ տվյալների, մոտ 18% է: Եթե նկատի ունենանք, որ 2014 թ. գործազրկության նպաստ այլևս չի տրվում, ապա այդ իրողությունը, իր դրական կողմերով հանդերձ, բացասաբար է անդրադառնում աղքատության մակարդակի վրա: Գործազրկության մակարդակի բարձրացումը, Օյբենի օրենքի համաձայն, բացասաբար է ազդում ՀՆԱ աճի, որն էլ, իր հերթին՝ աղքատության մակարդակի վրա: Տնտեսական աճի ազդեցությունը աղքատության վրա պետք է վերլուծել՝ նկատի ունենալով հասարակական արդյունքի, հարստության բաշխվածությունը երկրում:

2014 թ. Դավոսյան համաժողովում նշվեց, որ համաշխարհային տնտեսության մարտահրավերներից են աղքատությունը և եկամտի բևեռացվածությունը: Ներկայումս աշխարհի բնակչության 8%-ը տնօրինում է հասարակական հարստության 51%-ը: ԱՄՆ-ում բնակչության 1%-ին բաժին է ընկնում ազգային եկամտի 37%-ը: ԱՄՆ-ում 400 ընտանիք տնօրինում է երկրի ՀՆԱ 10%-ը, Ռուսաստանում 40 ընտանիք՝ ՀՆԱ 15%-ը, ՀՀ-ում 44 ընտանիք՝ ՀՆԱ 55%-ը<sup>1</sup>: Աղքատության վրա ազդեցություն ունի նաև ստվերային տնտեսությունը, որն առկա է բոլոր երկրներում: Դրա հետևանքով փաստացիորեն ստեղծված ՀՆԱ մի մասը չի արձանագրվում համապատասխան ցուցանիշում: Հատկապես այն վերաբաշխման չի ենթարկվում հարկային մեխանիզմի միջոցով: Համեմատության համար նշենք, որ ստվերային տնտեսության ծավալները ՀՆԱ-ի նկատմամբ Իտալիայում կազմում են 24%, Շվեդիայում՝ 17%, Ֆրանսիայում՝ 13%, Գերմանիայում՝ 15%, ԱՄՆ-ում՝ 8%, Շվեյցարիայում՝ 9%, Հայաստանում՝ 30-40%, Բոլիվիայում՝ 70%: Պետք է նկատի ունենալ, որ ստվերային տնտեսությունը նշանակում է ստվերային զբաղվածություն, որի հետևանքով մարդկանց եկամուտները չեն արտացոլվում աշխատավարձի պաշտոնական ցուցանիշներում: Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը 2013 աղքատությունը գնահատում է ոչ միայն ըստ եկամուտների, այլև սպառման ծավալների:

Տնտեսագետների հաշվարկի համաձայն՝ Հայաստան մտնող արտասահմանյան տրանսֆերտները տարեկան մոտ 2.0 մլրդ դոլար են, որի 85%-ը ստացվում է ՌԴ-ից, բանկային համակարգով: Համաշխարհային բանկի հաշվարկներով արտասահմանյան տրանսֆերտների 10% ավելացումը նպաստում է 0,4% տնտեսական աճին: Վերջինս կապված է ամբողջական պահանջարկի մեծացման և դրա արդյունքում՝ ամբողջական առաջարկի կամ արտադրության ծավալների ավելացման հետ:

Տնտեսական աճի և աղքատության կապվածությունը վերլուծելիս կարևոր է դիտարկել նաև եկամուտների բաշխման մեխանիզմը: Եկամուտների անհավասարությունը մեղմելու և աղքատությունը կրճատելու առումով, Ժամանակակից տնտեսագիտության մեջ առանձնացվում է երկու մոտեցում: Պրոֆեսոր Ջեյմս Ռոբինսոնը կարծում է, որ, գերհարուստների նկատմամբ բարձր հարկադրույքներ սահմանելով, կարելի է նպաստել պետական բյուջեի ավելացմանը, որն էլ վերաբաշխելով հզուտ աղքատների՝ մեղմացնել եկա-

<sup>1</sup> Տնտեսագիտության տեսություն (Գ. Կիրակոսյանի խմբագր.), Եր., 2009, էջ 468:

մուտների անհավասարությունը: Ներկայումս աշխարհում կա 1226 միլիարդատեր, որոնց ընդհանուր կարողությունը 5,6 տրլն դոլար է: ՄԱԿ-ի կողմից առաջարկություն է կատարվել 1% հարկ սահմանել այդ գերհարուստների ունեցվածքի նկատմամբ, որը հնարավորություն կտա վերացնելու ծայրահեղ աղքատությունն ամբողջ աշխարհում (850 մլն մարդ): Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ աշխարհի գերհարուստները օֆշորային գոտիներում հարկերից թաքցնում են մոտ 21 տրլն դոլար, որը ԱՄՆ-ի և Ճապոնիայի ՀՆԱ-ն է՝ միասին վերցրած:

Երկրորդ մոտեցման համաձայն, ըստ պրոֆեսոր Ալան Միտցելի, հասարակական հարստության վերաբաշխումը գերհարուստներից դեպի աղքատներ չի կարող մեղմացնել անհավասարությունը: Եթե հարցը դիտարկվի երկարաժամկետում, ապա աղքատությունը կնվազի նոր աշխատատեղերի ստեղծման շնորհիվ, որի անհրաժեշտ պայման են հնվեստիցիաները կամ կապիտալ ներդրումները, որոնք էլ, իրենց հերթին, տնտեսական աճի կարևոր նախադրյալ են: Այլ կերպ ասած, կարևոր է ոչ թե աղքատին «ողորմություն» տալը, այլև նրան աշխատելու, եկամուտ ստեղծելու հնարավորություն տալը, ինչպես մեր թվարկությունից առաջ 5-րդ դարում նշել է Չինաստանի նշանավոր փիլիսոփա Կոնֆուցիոսը<sup>1</sup>:

**САМВЕЛ ГРИГОРЯН**

## **ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ И ПРОБЛЕМА БЕДНОСТИ**

*Ключевые слова:* экономический рост, бедность, неравенство, вложения, перераспределение ВВП, денежные трансферты, инвестиции

*Бедность - относительная концепция, которая характерна для всех стран. Поэтому не случайно, что сокращение бедности является важным вопросом в социально-экономической политике страны. Пятилетняя экономическая программа правительства Армении предусматривает сокращение бедности на 12%, вместо нынешних с 30% до 18%. Поэтому важно поощрять инвестиции и благодаря этому обеспечить ежегодный темп роста в 5%.*

*Цель статьи - выявить ключевые проблемы экономического роста и сокращения бедности.*

**SAMVEL GRIGORYAN**

## **ECONOMIC GROWTH AND POVERTY ISSUE**

*Key words:* economic growth, poverty, inequality, investments, redistribution of GDP, money remittances, investment

*Poverty is a relative concept and is characteristic for all countries. Therefore, it is not accidental that poverty reduction is one of the key issues of the state's socio-economic policy. The 5-year economic*

---

<sup>1</sup> Բիզնեսի բարոյականության և սոցիալական պատասխանատվության հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Տնտեսագետ», 2015, էջ 27:



program of the RA government envisages that poverty in our country should be reduced by 12% and to 18% from current 30%. That's why it is important to promote investment and to ensure 5% annual economic growth.

In the article, we have set out to clarify the issues of economic growth and poverty reduction.

**ԷԴԳԱՐ ԹԱՂԱՐՅԱՆ**

Ասպիրանտ, ՀՊՏՀ

## **ՀՀ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՃԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Հիմնաբառեր.* *ինստիտուցիոնալ ծուղակ, բարձր տեխնոլոգիական արտադրանք, ինստիտուցիոնալ բարեփոխումներ, տեխնոլոգիական բաղադրիչ*

Չնայած 2000-ական թվականներից սկսած Հայաստանում ՀՆԱ-ն դինամիկ աճել է, որոշ տարիների՝ նույնիսկ երկնիշ տեմպով, այնուամենայնիվ այն պայմանավորվել է հիմնականում երկարաժամկետ հեռանկար չունեցող ոլորտներում գրանցված աճերով: Հաշվի առնելով տարբեր ժամանակահատվածներում ՀՀ տնտեսական աճի առանձնահատկությունները՝ սույն աշխատանքում դիտարկվել է աճի 4 փուլ, և իրականացվել է գործոնային վերլուծություն ըստ այդ փուլերի՝ կարևորելով հատկապես տեխնոլոգիական փոփոխությունների համար գործող ինստիտուտների դերը:

Հայտնի է, որ ԽՍՀՄ կազմում Հայաստանն աչքի է ընկել ոչ միայն քիմիական, սննդի, հանքահումքային զարգացած արդյունաբերությամբ, բարձրագույն կրթությամբ որակյալ աշխատուժով, այլև բարձր տեխնոլոգիական արտադրությամբ, որը կազմել է ՀՆԱ մոտ 20%-ը<sup>1</sup>: «ԻՎի Քոնսալթինգ» խորհրդատվական ընկերության կողմից հրապարակված հետազոտություններից մեկում Հայաստանը, նույնիսկ ներկայացվել է որպես ԽՍՀՄ «Սիլիկոնյան հարթավայր»<sup>2</sup>: Տնտեսական աճի առանձնահատկությունները բացահայտելու համար 1990-ական թթ. մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածը պայմանականորեն բաժանենք 4 փուլի՝

1. հետխորհրդային (1990–1995 թթ.),
2. վերականգնողական աճի (1996–2000 թթ.),
3. երկնիշ տնտեսական աճի (2001–2009 թթ.),
4. հետճգնաժամային (2010 թ. սկսած):

<sup>1</sup> Социально-экономическое развитие постсоветских стран: итоги двадцатилетия, “Российская академия наук”, М. 2012, с. 191.

<sup>2</sup> Armenia: Diaspora Assisted Growth, EV Consalting, p. 3.